Արձանագրություն N 7

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/15» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան

07.05.2020թ.
Ժամը՝ 16:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Ոստանիկյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Խաչատրյանը, Ա. Ստեփանյանը, Ռ. ՈՒմրոյանը, Վ. Հարությունյանը, Մ. Կիրիմյանը, Մ. Ասլանյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյանը

1. **«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/15» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 05.05.2020 և 07.05.2020 թվականին ներկայացված հարցումներին պարզաբանումներ տրամադրելու վերաբերյալ**

(Գ. Ոստանիկյան)

<u>Պարզաբանման պահանջի տեքստ հ 1</u>.

1. Հավելված 1-ի տեխնիկական բնութագրում նշված է, որ Կազմակերպությունը փոխարինման ավարտից հետո պետք է ներկայացնի վերելակների տեխնիկական անվտանգության փորձաքննության եզրակացություն սակայն տվյալ եզրակացությունը ստանալու համար անհրաժեշտ է նոր նախագիծ կամ նախագծի փոփոխություն:
Հարց՝
1.1 Արդյոք հրավերում նշված տեխնիկական տվյալները չպետք է կազմվեն հիմք ընդունելով նախագծային արդյունքները և ոչ թե հակառակը:
1.2 Խնդրում ենք նաև պարզաբանել թե նախագծի բացակայության պարագայում որտեղից են վերցվել վերելակների տեխնիկական տվյալները և ինչ հիմքերով, քանի որ 1300 մմ անոց կամ 1400 մմ անոց հորանների դեպքում 800 մմ դռան բացվածքը չի կարող համարվել ստանդարտ:
2. Հավելված 1-ի տեխնիկական բնութագրում նշված է, որ Տեղադրման աշխատանքներն իրականացնելուց առաջ ընտրված մասնակիցը կարող է ըստ հասցեների կատարել հետևյալ պարամետրերի չափագրում:
- հորանի չափ
-Կանգառների թիվը
-Վերին հարկի բարձրությունը
-Բարձրացման բարձրությունը

Հարց՝
Հաշվի առնելով այն փաստը, որ վերելակները պատվիրվելու են ըստ հրավերի պահանջների և հետո նոր միայն կատարվելու է տեղադրման աշխատանքներ, և եթե փաստացի հորանների և հրավերի տվյալներում առկա լինեն չափերի անհամապատասխանություններ որոնք անհնարին կդարձնեն արդեն իսկ պատվիրված վերելակների տեղադրումը ով է կրելու պատասխանատվություն չտեղադրվող կամ հրավերի պահանջներին անհամապատասխան վերելակների տեղադրման արդյունքում:

3. Հավելված 1-ի տեխնիկական բնութագրում նշված է, որ Նախընտրելի ժամկետը՝ Պայմանագիրը (համաձայնագիրը) ուժի մեջ մտնելու օրվանից 2020 թվականի հոկտեմբերի31-ը ներառյալ:
ՀԱՐՑ՝
3.1 Նախընտրելի ասելով դա ընդամենը նախընտրելի է թե հստակ սահմանված ժամանակահատված, և եթե միայն նախընտրելի է և ոչ թե հստակ վերջնաժամկետ ապա ինչ հանգամանքներից ելնելով կարող են դրանք երկարաձգվել:
3.2 Խնդրում ենք նաև տեղեկացնել թե ինչ հիմքերով և գնահատականների հիման վրա է ընտրվել վերջնաժամկետը, քանի որ << տարածքում երբևե նման ծավալի վերելակների աշխատանքների փոխարինում չի կատարվել և հաշվի առնելով միջազգային փորձը նման քանակի վերելակների համար տրամադրվում է ավելի երկար ժամանակահատված: Քանի որ միջին հաշվարկներով միայն վերելակների արտադրությունը և մատակարարումը << տարածք կտևի 80 օր:

4. Հավելված 1-ի տեխնիկական բնութագրում նշված է, որ պետք է տրամադրվի 24 ամսյա պահեստամասերի երաշխիքային ժամկետ այն դեպքում, երբ տեխնիկական սպասարկման ժամկետը տեղադրողի կողմից ընդամենը 12 ամիս է:
Հարց՝
12 Ամսից հետո վերելակները այլ X ընկերության սպասարկման հանձնելուց հետո, եթե տվյալ X ընկերության անգործության կամ սխալ գործողությունների պատճառով առաջանան պահեստամասերի վնասում, որը որ տեխնիկապես հնարավոր չի լինի ապացուցել որ կատարվել է X ընկերության անգործության կամ սխալ գործողությունների արդյունքում արդյոք տրմաբանական է որ պետք է մատակարարը կրի դրա վնասը այն դեպքում երբ նա այլևս չի կատարում տվյալ համակարգի կամ համակարգերի տեխնիկական սպասարկումը:
5. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերելակների դռների մեծացման արդյունքում քանդվելու են արդեն իսկ կառուցված պատեր, արդյոք անհրաժեշտություն չի առաջանալու ստանալ սեսմիկ եզրակացություն
6. Հաշվի առնելով այն հանգամանքը որ յուրաքանչյուր չափաբաժին պարունակում է առնվազն 58 վերելակ և ենթադրենք չափաբաժիններից ինչ որ մեկում ընդամենը մեկ վերելակ տեղադրվի նշված ժամկետից ուշ կամ առկա լինի այլ անհամապատասխանություն, Արդյոք հնարավոր կլինի տվյալ չափաբաժնում առկա մնացած վերելակների հանձնումը թե ընդամենը մեկ վերելակի թերության պատճառով տուժելու է ամբողջ չափաբաժինը
7. Արդյոք Հնարավոր է յուրաքանչյուր չափաբաժնում որոշակի քանակով տեղադրված վերելակների հանձնում ընդունումը և ստանալ փաստացի կատարված և շահագործման հանձնված վերելակների ֆինանսավորումը փուլերով թե հանձնում ընդունումը ինչպես նաև ֆինանսավորումը կատարվում է յուրաքանչյուր Չափաբաժնի ավարտից և չափաբաժնում ներառված բոլոր վերելակները շահագործման հանձնելուց հետո:

Հարցադրում N 2
1. Հաշվի առնելով տեղական նորմերը վերելակների վերջին հարկի բարձրությունը չի կարող լինել 1000 մմ կամ 1500 մմ կամ դրանց մոտ այլ չափեր:
Խնդրում ենք 6-րդ չափաբաժնի ԱՐԱԲԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ հորանների վերջին հարկերի բարձրությունների վերաբերյալ տրամադրել ճիշտ տեղեկատվություն:
2. Տեխ տվյալներում նշված է որ պետք է փոխարինվեն Հակակշռի ուղղորդիչները:
Արդյոք ենթակա են փոխարինման հակակշիռի քարերը և հակակշռի մետաղական կարկասը:

Պարզաբանում տրամադրելու տեքստ.

1. Հավելված 1-ի տեխնիկական բնութագրում նշված է, որ Կազմակերպությունը փոխարինման ավարտից հետո պետք է ներկայացնի վերելակների տեխնիկական անվտանգության փորձաքննության եզրակացություն սակայն տվյալ եզրակացությունը ստանալու համար անհրաժեշտ է նոր նախագիծ կամ նախագծի փոփոխություն:

Հարց՝
1.
1.1 Արդյոք հրավերում նշված տեխնիկական տվյալները չպետք է կազմվեն հիմք ընդունելով նախագծային արդյունքները և ոչ թե հակառակը:
1.2 Խնդրում ենք նաև պարզաբանել թե նախագծի բացակայության պարագայում որտեղից են վերցվել վերելակների տեխնիկական տվյալները և ինչ հիմքերով, քանի որ1300 մմ անոց կամ 1400 մմ անոց հորանների դեպքում 800 մմ դռան բացվածքը չի կարող համարվել ստանդարտ:

2. Հավելված 1-ի տեխնիկական բնութագրում նշված է, որ Տեղադրման աշխատանքներն իրականացնելուց առաջ ընտրված մասնակիցը կարող է ըստ հասցեների կատարել հետևյալ պարամետրերի չափագրում:
-հորանի չափ
-Կանգառների թիվը
-Վերին հարկի բարձրությունը
-Բարձրացման բարձրությունը

Հարց՝
Հաշվի առնելով այն փաստը, որ վերելակները պատվիրվելու են ըստ հրավերի

պահանջների և հետո նոր միայն կատարվելու է տեղադրման աշխատանքներ, և եթե փաստացի հորանների և հրավերի տվյալներում առկա լինեն չափերի անհամապատասխանություններ որոնք անհնարին կդարձնեն արդեն իսկ պատվիրված վերելակների տեղադրումը ով է կրելու պատասխանատվություն չտեղադրվող կամ հրավերի պահանջներին անհամապատասխան վերելակների տեղադրման արդյունքում:

Պատասխան 1-ին և 2-րդ հարցերի վերաբերյալ.

«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արտադրական վտանգավոր օբյեկտի կառուցման, ընդլայնման, վերակառուցման, տեխնիկական վերազինման, ինչպես նաև կոնսերվացման, ապամոնտաժման նախագծային փաստաթղթերը (այսուհետ՝ նախագծային փաստաթղթեր) ենթակա են տեխնիկական անվտանգության փորձաքննության:

Առանց տեխնիկական անվտանգության դրական փորձագիտական եզրակացության՝ նախագծային փաստաթղթերի հաստատումն արգելվում է:

Քանի, որ նախապես հնարավոր չէ կանխատեսել թե ինչ մոդելի վերելակ է առաջարկվելու և տեղադրվելու մասնակցի կողմից, հետևաբար նաև պատվիրատուի կողմից նախապես նպատակահարմար չէ իրականացնելու վերազինման նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության փորձաքննություն:

Ինչ վերաբերում է 1.2 և 2-րդ հարցերին, ապա տեղեկացնում ենք, որ Հրավերի տեխնիկական բնութագրի թիվ 1 հավելվածով ներկայացված չափորոշիչները տրամադրվել են Երևան քաղաքի վարչական շրջանների կողմից, որպես բնութագրիչ տվյալներ և հաշվի առնելով որ շենքերի կառուցվածքի տարբերությունները և դրանցով պայմանավորված նաև վերելակների և հորանների տեխնիկական բնութագրերի և չափերի բազմազանությունը, ինչպես նաև հնարավոր տարակերպ ընկալումից խուսափելու նպատակով, գտնում ենք, որ անհրաժեշտ է որպիսզի մասնակիցը մինչև հայտ ներկայացնելը, կամ դրանից հետո, նաև իր կողմից տեղում իրականացնի տեխնիկական պարամետրերի ցանկացած չափագրում իր մասնագետների կողմից:

3. Հավելված 1-ի տեխնիկական բնութագրում նշված է, որ Նախընտրելի ժամկետը՝ Պայմանագիրը (համաձայնագիրը) ուժի մեջ մտնելու օրվանից 2020 թվականի հոկտեմբերի 31-ը ներառյալ:

Հարց՝

3.1 Նախընտրելի ասելով դա ընդամենը նախընտրելի է թե հստակ սահմանված ժամանակահատված, և եթե միայն նախընտրելի է և ոչ թե հստակ վերջնաժամկետ ապա ինչ հանգամանքներից ելնելով կարող են դրանք երկարաձգվել:

3.2 Խնդրում ենք նաև տեղեկացնել թե ինչ հիմքերով և գնահատականների հիման վրա է ընտրվել վերջնաժամկետը, քանի որ ՀՀ տարածքում երբևե նման ծավալի վերելակների աշխատանքների փոխարինում չի կատարվել և հաշվի առնելով միջազգային փորձը նման քանակի վերելակների համար տրամադրվում է ավելի երկար ժամանակահատված: Քանի որ միջին հաշվարկներով միայն վերելակների արտադրությունը և մատակարարումը ՀՀ տարածք կտևի 80 օր:

Պատասխան

Հրավերի տեխնիկական բնութագրի թիվ 1 հավելվածով հստակ սահմանվել է, որ պայմանագրի կատարման նախընտրելի ժամկետն է՝ Պայմանագիրը (համաձայնագիրը) ուժի մեջ մտնելու օրվանից 2020 թվականի հոկտեմբերի 31-ը ներառյալ:

Տեղեկացնում ենք, Պայմանագրով սահմանված ժամկետը կարող է երկարացվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և Գնումների մասին օրենսդրության համապատասխան:

4. Հավելված 1-ի տեխնիկական բնութագրում նշված է, որ պետք է տրամադրվի 24 ամսյա պահեստամասերի երաշխիքային ժամկետ այն դեպքում, երբ տեխնիկական սպասարկման ժամկետը տեղադրողի կողմից ընդամենը 12 ամիս է:

Հարց՝

12 ամսից հետո վերելակները այլ X ընկերության սպասարկման հանձնելուց հետո, եթե տվյալ X ընկերության անգործության կամ սխալ գործողությունների պատճառով առաջանան պահեստամասերի վնասում, որը որ տեխնիկապես հնարավոր չի լինի ապացուցել որ կատարվել է X ընկերության անգործության կամ սխալ գործողությունների արդյունքում արդյոք տրամաբանական է որ պետք է մատակարարող

կրի դրա վնասը այն դեպքում երբ նա այլևս չի կատարում տվյալ համակարգի կամ համակարգերի տեխնիկական սպասարկումը:

Պատասխան

Եթե պահեստամասերի վնասը տեղի է ունեցել երաշխիքային ժամկետում և արտաքին ազդեցության հետևանք է, ապա մատակարարը տվյալ դեպքում չի կրում վնասը:

5. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերելակների դռների մեծացման արդյունքում քանդվելու են արդեն իսկ կառուցված պատեր, արդյոք անհրաժեշտություն չի առաջանալու ստանալ սեսմիկ եզրակացություն:

Պատասխան

Համաձայն՝ **«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝** արտադրական վտանգավոր օբյեկտի կառուցման, ընդլայնման, վերակառուցման, տեխնիկական վերազինման, ինչպես նաև կոնսերվացման, ապամոնտաժման նախագծային փաստաթղթերը (այսուհետ՝ նախագծային փաստաթղթեր) ենթակա են տեխնիկական անվտանգության փորձաքննության:

Առանց տեխնիկական անվտանգության դրական փորձագիտական եզրակացության՝ նախագծային փաստաթղթերի հաստատումն արգելվում է:

Հետևավաբար, եթե նախագիծ իրականացնողը վերազինման նախագծային փաստաթղթեր կազմելիս գտնում է, որ տվյալ հասցեում տեղադրման աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ է ստանալ նաև սեսմիկ եզրակացություն, ապա այո:

6. Հաշվի առնելով այն հանգամանքը որ յուրաքանչյուր չափաբաժին պարունակում է առնվազն 58 վերելակ և ենթադրենք չափաբաժիններից ինչ որ մեկում ընդամենը մեկ վերելակ տեղադրվի նշված ժամկետից ուշ կամ առկա լինի այլ անհամապատասխանություն, Արդյոք հնարավոր կլինի տվյալ չափաբաժնում առկա մնացած վերելակների հանձնումը թե ընդամենը մեկ վերելակի թերության պատճառով
տուժելու է ամբողջ չափաբաժինը:

Պատասխան

Ձեր կողմից բարձրացված հարցի պատասխանը սահմանված է Մրցույթի հրավերի պայմանագրի նախագծի 2. 1 /Գնորդի իրավունք ունի/ մասով և 6-րդ /Կողմերի պատասխանատվությունը/ մասով:

7. Արդյոք Հնարավոր է յուրաքանչյուր չափաբաժնում որոշակի քանակով տեղադրված վերելակների հանձնում ընդունումը և ստանալ փաստացի կատարված և շահագործման հանձնված վերելակների ֆինանսավորումը փուլերով թե հանձնում ընդունումը ինչպես նաև ֆինանսավորումը կատարվում է յուրաքանչյուր Չափաբաժնի ավարտից և չափաբաժնում ներառված բոլոր վերելակները շահագործման հանձնելուց հետո:

Պատասխան

Տեղեկացնում ենք, որ Գնումների մասին ՀՀ օրենդրությամբ և մրցույթի հրավերով որևէ սահմանափակում չկա ապրանքը փուլային տարբերակով ընդունելու վերաբերյալ:

Հարց 1. Հաշվի առնելով տեղական նորմերը վերելակների վերջին հարկի բարձրությունը չի կարող լինել 1000 մմ կամ 1500 մմ կամ դրանց մոտ այլ չափեր:

Խնդրում ենք 6-րդ չափաբաժնի Արաբկիր վարչական շրջանի հորանների վերջին հարկերի բարձրությունների վերաբերյալ տրամադրել ճիշտ տեղեկատվություն:

Պատասխան

Հրավերի տեխնիկական բնութագրի թիվ 1 հավելվածով ներկայացված չափորոշիչները տրամադրվել են Երևան քաղաքի վարչական շրջանների կողմից, որպես կողմնորոշիչ տվյալներ և հաշվի առնելով որ շենքերի կառուցվածքի տարբերությունները և դրանցով պայմանավորված նաև վերելակների և հորանների տեխնիկական բնութագրերի և չափերի բազմազանությունը, ինչպես նաև հնարավոր տարակերպ ընկալումից խուսափելու նպատակով, գտնում ենք, որ անհրաժեշտ է որպիսզի մասնակիցը մինչև հայտ ներկայացնելը, կամ դրանից հետո, նաև իր կողմից տեղում իրականացնի տեխնիկական պարամետրերի ցանկացած չափագրում իր մասնագետների կողմից:

Հարց 2. Տեխ տվյալներում նշված է որ պետք է փոխարինվեն հակակշռի ուղղորդիչները: Արդյոք ենթակա են փոխարինման հակակշիռի քարերը և հակակշռի մետաղական կարկասը:

Պատասխան

Այո, բնականաբար փոխարինման ենթակա են նաև փոխարինման հակակշիռի քարերը և հակակշռի մետաղական կարկասը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 7, դեմ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Գ. Ոստանիկյան
Անդամներ՝		Ա. Խաչատրյան
		Ա. Ստեփանյան
		Ռ. Ռիմրոյան
		Վ. Հարությունյան
		Մ. Կիրիմյան
		Մ. Ասլանյան
Քարտուղար՝		Գ. Մուրադյան